

## **Կոտայքի մարզպետն աշխատանքային այցով Բյուրեղավանի քաղաքային պոլիկլինիկայում էր**

Կոտայքի մարզպետ Ահարոն Սահակյանը ՀՀ առողջապահության նախարարի տեղակալ Արտակ Ջումայանի հետ աշխատանքային այց են կատարել Բյուրեղավանի քաղաքային պոլիկլինիկա:

Համայնքի ղեկավար Հակոբ Բալայանի և պոլիկլինիկայի տնօրեն Միքայել Միքայելյանի ուղեկցությամբ նրանք շրջել են կառավարության սուբվենցիոն ծրագրերով հիմնովին վերանորոգված պոլիկլինիկայի տարածքում, ծանոթացել բուժհաստատության պայմաններին, հնարավորություններին, մատուցվող ծառայություններին, ոլորտի պատասխանատուների հետ քննարկել առողջության առաջնային պահպանման օղակի առաջնահերթություններն ու խնդիրները:

Փոխնախարարը և մարզպետը վստահեցրել են, որ կարվի առավելագույնը, որպեսզի համատեղ աշխատանքի արդյունքում բժշկական անհրաժեշտ սարքավորումներով հագեցված լինի ոչ միայն այս, այլ նաև մարզի բոլոր առողջապահական կազմակերպությունները: